ArmLur.am

ISSN 1829-2763

ՕՐԱԹԵՐԹ ԲՈԼՈՐԻ ԵՎ ԱՄԵՆ ԻՆՉԻ ՄԱՍԻՆ

Ժողովուրդ

21 հունիսի ուրբաթ 2024
տպագրության ԺԳ տարի

84
(2934)

քաղաք Երեւան, Աբովյան 22ա/3 (0010) + 374 10 546423 info.armlur@gmail.com, info.zhoghovurd@gmail.com

100 դրամ

27 ՄԼՆ ՏԱՐԵԿԱՆ ԵԿԱՄՈՒՏ, 46 ՄԼՆ ՎԱՐԿ

Հանրապետության արդարադատության նախարարության քրեակատարողական ծառայության պետ, արդարադատության գնդապետ Ամբակում Գրիգորյանը պաշտոնին նշանակվել է 2023 թվականի դեկտեմբերի 18-ին: Մինչ այդ զբաղեցրել է ՀՀ ԱՆ քրեակատարողական ծառայության պետի առաջին տեղակալի պաշտոնը:

Ըստ Ամբակում Գրիգորյանի գույքի, եկամուտների, ծախսերի եւ շահերի 2023 թվականի հայտարարագրի՝ 2022 թվականին Գրիգորյանը ձեռք է բերել 1 բնակարան բազմաբնակարան շենքում եւ 1 ավտոտնակ, որոնք գտնվում են Երեւանում:

Ամբակում Գրիգորյանը 2011 թվականին ձեռք է բերել անհատական բնակելի տուն կրկին Երեւան քաղաքում:

Քրեակատարողական ծառայության պետը տրանսպորտային որեւէ միջոց չի հայտարարագրել:

Գրիգորյանի բանկային հաշիվների մնացորդները կազմել են 2 մլն 617 հազար դրամ, կանխիկ դրամական միջոցները՝ 25 մլն դրամ եւ 10 հազար դոլար:

ՀՀ բանտապետ Ամբակում Գրիգորյանի հաշվետու տարվա եկամուտները կազմել են 27 մլն 129 հազար դրամ, որից 11 մլն 451 հազար դրամը աշխատանքի վարձատրություն է ՀՀ ԱՆ քրեակատարողական ծառայությունից:

Ամբակում Գրիգորյանը միասնական սոցիալական ծառայությունից ստանում է կենսաթոշակ, այն տարեկան կազմում է 2 մլն 598 հազար դրամ:

Հաշվետու տարվա եկամուտների բաժնում նկատում ենք, որ Գրիգորյանը ՀՀ ֆինանսների նախարարությունից ստացել է 2 մլն 509 հազար դրամ, որը, ինչպես հասկանում ենք, ստացված վարկերի եւ փոխառությունների մայր գումարի մնացորդը հաշվետու տարվա դեկտեմբերի 31-ի դրությամբ բաժնից, եկամտահարկի վերադարձի օրենքով հիփոթեքի մայր գումարի մնացորդը մարելու համար է. իսկ հաշվետու տարվա դեկտեմբերի 31-ի դրությամբ պետի վարկերի եւ փոխառությունների մայր գումարի մնացորդը կազմում է 46 մլն 010 հազար դրամ:

Ամբակում Գրիգորյանը եկամուտ ստացել է նաեւ վարձակալության հանձնված գույքից, որի վարձավճարը ամբողջ տարվա համար կազմել է 4 մլն 950 հազար դրամ:

Եկամուտներից 5 մլն 500 հազար դրամը 3 տարբեր վարկեր են «Ինեկոբանկ» ՓԲԸ-ից:

Շարունակությունը՝ ArmLur.am կայքում:

Չնայած, որ Հայաստանի՝ ԵՄ անդամակցության թեման վերջին օրերին արտախորհրդարանական ուժերի ձեռամբ կրկին քաղաքական օրակարգ է մտել եւ քննարկումների թեժ փուլում է, բայց իշխանության ներսում դեռեւս այս հարցի շուրջ կոնսենսուս չի ձեւավորվել: Ինչպես հայտնի է, հայաստանյան արեւմտամետ դիրքերից հանդես եկող քաղաքական ուժերը՝ Տիգրան Խզմալյանի «Հայաստանի Եվրոպական կուսակցություն»-ը, Արամ Սարգսյանի «Հանրապետություն» կուսակցությունը, Արման Բաբաջանյանի «Հանուն Հանրապետության» կուսակցությունը եւ Լեւոն Շիրինյանի «Քրիստոնեա-ժողովրդավարական» կուսակցությունը ձեւավորել են «Ժողովրդավարական ուժերի հարթակ» եւ պաշտոնապես առաջարկել են իշխանություններին հանրաքվե անցկացնել՝ Եվրամիությանն անդամակցելու վերաբերյալ: Ընդ որում, արտախորհրդարանական ուժերը ժամկետ են դրել՝ գործընթացը սկսել 3-4 ամսվա ընթացքում: Հարցն այնքան լուրջ է դրված արտախորհրդարանական ուժերի կողմից, որ այսօր անգամ ԱԺ-ում Հայաստանի՝ ԵՄ անդամակցության հայտ ներկայացնելու հարցով հանրաքվե անցկացնելու առաջարկի շուրջ լսումներ են անցկացվելու: Չնայած արտախորհրդարանական այս ուժերի խիստ շտապողականությանը՝ «Ժողովուրդ» օրաթերթը տեղեկացավ, որ ՔՊ-ի ներսում ԵՄ անդամակցության հարցով տարաձայնություններ կան: Պատգամավորներից շատերը հենց քննարկումների ժամանակ կարծիք են հայտնել, որ դեռ «պատրաստ չենք» այս կարեւոր ու կտրուկ արտաքին քաղաքական շրջադարձին: Այսպես ասած՝ ՔՊ-ում երկու թեւի են բաժանված՝ մի մասը կարծում է, որ Հայաստանի միակ ճիշտ ուղին ԵՄ-ն է, մյուս մասն էլ կարծում է, որ ԵՄ անդամակցության հարցում չպետք է շտապել. պետք է յոթ չափել ու մեկ կտրել: Թե ինչ զարգացումներ կլինեն այս մասով, ի վերջո ՔՊ-ի որ թեւը կհաղթի՝ պարզ կդառնա առաջիկայում:



Հիմք ընդունելով վարչապետի ընտանիքի կայքում Տիգրան Ավինյանի այն պնդումը, թե ավագանու անդամ Սամվել Հակոբյանը պետք է հրաժարվի կամ ԱԺ պատգամավորի օգնականի պաշտոնից, կամ ավագանու մանդատից՝ կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովը հարուցել էր վարույթ, եւ քննությունից հետո կարճել այն: Սամվել Հակոբյանի կողմից անհամատեղելիության պահանջները առերեւույթ խախտելու վերաբերյալ վարույթը կարճելիս հիմք է ընդունվել օրենքի 2024 թվականի մայիսի 25-ին ընդունվելու փաստը, որի կարգավորումները չէին կարող տարածվել մինչեւ այդ ծագած հարաբերությունների վրա: Այսինքն՝ օրենքը լավ չեն հասկացել:

Գլխավոր դատախազությունը խիստ է տրամադրված եւ ամեն գնով ցանկանում է կալանքի տանել երգիչ Հայկ Ղեւոնդյանի՝ Սպիտակցի Հայկոյի որդուն՝ Հրաչյա Ղեւոնդյանին: Մեզ հայտնի դարձավ, որ դատախազությունը բողոքարկել է հայտնի երգչի որդու ազատ արձակման որոշումը: Ինչպես հայտնի է, մայիսի 23-ին Հրաչյա Ղեւոնդյանն ազատ էր արձակվել դատական նիստերի դահլիճից. դատարանը, հիմնավոր կասկածի բացակայության հիմքով, մերժել էր նրան կալանավորելու՝ քննիչի միջնորդությունը: Բանն այն է, որ քննչական կոմիտեն հայտարարել էր, որ իշխանությունը բռնությամբ զավթելու փորձ է կանխել: Իշխանությունը յուրացնելու նախապատրաստության համար մեղադրանք է առաջադրվել հանրությանը «Սպիտակցի Հայկո» անունով հայտնի երգիչ Հայկ Ղեւոնդյանի որդուն, նրան կալանավորելու միջնորդություն է ներկայացվել: Քննչական կոմիտեն տեսանյութ էր հրապարակել, որում մի տղամարդ դժգոհում էր վարչապետ Նիկոլ Փաշինյանի վարած քաղաքականությունից, եւ այժմ կոմիտեն պնդում է, թե այդ խոսքերի հեղինակը Հրաչյա Ղեւոնդյանն է, որը նպատակ է ունեցել մի խումբ անձանց հետ զավթելու իշխանությունը. թե ովքեր են այդ անձինք, իրավապահները դեռ չեն պարզել, բայց, ըստ նախաքննական մարմնի, դիտարկվել էր նաեւ հանրահավաքին այդ ծրագիրն իրագործելու հարցը: Ղեւոնդյանը չի ընդունում իրեն առաջադրված մեղադրանքը: Նրա փաստաբանը հայտարարել էր՝ ձայնագրությունը մոնտաժված է, կոնտեքստից կտրված, իսկ իր պաշտպանյալն իշխանությունը զավթելու որեւէ մտադրություն չի ունեցել:

ԶՐՈՒՅՑ

ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ ԳՅՈՒՄ ԵՆ ԳՅՈՒՂԱՑԻՆԵՐԻ ՎՐԱ

Վերջին ամիսներին Հայաստանի քաղաքական եւ հասարակական կյանքի կիզակետում է հայտնվել Տավուշից սկիզբ առած սահմանազատման եւ սահմանագծման գործընթացի արդյունքում ձեւավորված «Տավուշը հանուն հայրենիքի» շարժումը: Անցնող երկու շաբաթներին հատկապես քննարկման առարկա են դարձել շարժման հետագա անելիքները, հնարավոր պառակտումներն ու շարժման «մարելը», ինչպես նաեւ, եւ հիմնականում հունիսի 12-ին Բաղրամյան պողոտայում ցուցարարների եւ լրագրողների նկատմամբ կիրառված բռնությունը, որի հետեւանքով մոտ 100 քաղաքացի դիմել է բուժհաստատություններ:

«Ժողովուրդ» օրաթերթը զրուցել է ԱԺ պատգամավոր, «Տավուշը հանուն հայրենիքի» շարժման առաջնորդներից Գառնիկ Դանիելյանի հետ: Խոսել ենք շարժման հետագա քայլերից, հունիսի 12-ին Բաղրամյան-Դեմիրճյան խաչմերուկում ոստիկանության կողմից կիրառված լուսաձայնային նռնակներից եւ Տավուշում իրավիճակից:

-Պարոն Դանիելյան, երկու օր առաջ Բագրատ սրբազանն իր ասուլիսի ընթացքում հայտարարեց, որ հունիսի 21-ից գնալու է Տավուշ՝ Ոսկեպար, Կիրանց, որպեսզի իր աչքով տեսնի այն փշալարերը, որոնք, Նիկոլ Փաշինյանի խոսքով, պետք է ապահովեն տեղացիների անվտանգությունը: Այսինքն՝ կարո՞ղ ենք արձանագրել, որ շարժումը տեղափոխվելու է Կիրանց, եւ գործընթացներն այնտեղ են զարգանալու:

-Ո՛չ, Կիրանց տեղափոխվելու խնդիր չունենք, սակայն սահմանամերձ համայնքներում առկա բազմաթիվ խնդիրներ կան այս պահին: Մենք Երեւանում հանդիպում ենք ունեցել Կիրանց, Ոսկեպար եւ Բաղանիս գյուղերի բնակիչների հետ: Մի քանի օր առաջ հանդիպել ենք հենց Կիրանց եւ Ոսկեպար գյուղերի բնակիչների հետ ու մարդիկ հետեւյալ խնդրի առջեւ են կանգնել. գույքային հարցեր ունեն, եւ մենք որոշեցինք, որ Սրբազան հոր հետ պետք է այցելենք Տավուշ: Խնդիրը հետեւյալն է՝ մեր հայրենակիցներն ունեն կադաստրի վկայականներ, սակայն ստիպողաբար եւ որոշակի նյութական շահագրգռվածությամբ ստիպում են հրաժարվել մարդկանց դրանցից: Դիմումի համաձայն՝ պիտի խնդրանքով դիմեն մարզպետարան, որ իրենցից վերցնեն կադաստրի վկայականները եւ հրաժարվեն գույքային եւ այլ պահանջներից:

Կարճ ասած՝ մարդկանց փաստի առաջ են դնում՝ թե՛ պիտի հրաժարվեն, թե՛ խնդրագիր գրեն դրա համար՝ համաձայն կառավարության ինչ-որ որոշման: Ինքս հետաքրքրվում եմ, թե ինչ որոշում է. հարցում եմ ուղարկել, հայտնի չէ, թե ինչ որոշման արդյունք է դա: Այսինքն՝ պատասխանատվությունը դնում են գյուղացիների վրա, որ վաղը մյուս օրը ասեն. «Դուք եք այդ փաստաթուղթը գրել, մեզ խնդրել եք, որ այդ տարածքները հանձնենք Ադրբեջանին»: Պատասխանատվությունը, փաստորեն, գյուղացիների դաշտ են տեղափոխում, եւ այն մարդիկ, որոնք չեն գնացել այդ ճանապարհով մտավախություն ունեն հանցակից դառնալու: Գյուղում էլ են մարդկանց երկու մասի բաժանել՝ մարդիկ, որոնք վերցնում են փոխհատուցումը, եւ մարդիկ, որոնք չեն վերցնում գումարը:

-Իսկ շա՞տ են մարդիկ, որոնք հրաժարվել են փոխհատուցումից:

-Այո բավականին մարդիկ կան, որ հրաժարվել են: Մարդիկ, որոնք հողակտորներ ունեն, որոնց մեջ թե՛ ԽՍՀՄ ժամանակաշրջանից մնացած վկայականներ են, թե՛ անկախության շրջանի, նույնիսկ վերջին տարիների: Եթե այդ մարդիկ տրված ժամանակահատվածում չվերցնեն վկայականները, ապա փոխհատուցումից էլ երբեք օգտվել չեն կարողանալու. վկայականները չեղարկվելու են: Շանտաժի են ենթարկում մարդկանց:

Զրուցեց ՔՐԻՍՏԻՆԵ ՄՈՒՇԵՂՅԱՆԸ

ԲՌՆԱՐԱՐՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

ԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ՝ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԳՈՐԾԸՆԿԵՐՆԵՐԻՆ

ՀՀ Ազգային ժողովի Մարդու իրավունքների պաշտպանության եւ հանրային հարցերի մշտական հանձնաժողովի ադյուտանտաբար լիազորություններ դադարեցված նախագահ Թագուհի Թովմասյանը սոցցանցի իր էջում գրել է.

«Գրություններ եմ ուղարկել միջազգային իմ գործընկերներին՝ հունիսի 12-ին Երեւանի Բաղրամյան-Դեմիրճյան խաչմերուկում արձանագրված իրավունքների բազմապիսի խախտման փաստերով:

✔ «Ֆոտոլուր» լրատվական գործակալությունը ֆիքսել է «Զարյա 3» տեսակի նռնակի կիրառումը դեպքի վայրում, որը, «Մարդու նկատմամբ գործադրվող հատուկ միջոցների կիրառման համար թույլատրելի չափանիշները սահմանելու մասին» N 09-Ն հրամանի համաձայն, թույլատրելի չէ: ՀՀ ոստիկանությունը կարող էր կիրառել միայն «Զարյա» եւ «Զարյա-2» տեսակի լուսաձայնային նռնակ:

✔ Նիկոլ Փաշինյանի հռչակած «բրենդային ժողովրդավարության» պայմաններում խաղաղ անհնազանդության ակցիա իրականացնողների նկատմամբ կիրառվել է ակնհայտորեն անհամաչափ ուժ:

✔ Առանց պատշաճ եւ բոլորի համար հասանելի նախազգուշացման՝ ոստիկանությունը հատուկ միջոցներ է կիրառել խաղաղ հավաքի մասնակիցների նկատմամբ: Սա հակասում է խաղաղ հավաքի անցկացման սահմանադրական իրավունքին:

✔ Քաղաքացիներից մեկն անգամ, չգիտակցելով, որ նետվածը նռնակ է, վերցրել է այն ձեռքը եւ պայթյունի հետեւանքով կորցրել մատները:

✔ Չսահմանափակվելով անզեն քաղաքացիների մեջ լուսաձայնային եւ, տարբեր տվյալներով, նաեւ բեկորային պայթուցիկներ նետելով (տասնյակ մարդիկ ունեն բեկորային վնասվածքեր)՝ բողոքի ակցիայի մասնակիցներին բերման ենթարկող ոստիկանները ծեծել են նրանց ոստիկանական մեքենաների մեջ կամ բերման ենթարկելու ընթացքում: Իսկ ԱԺ տարածքից դիպուկահարներ են ցուցադրաբար կանգնել, ինչը ակնհայտ վախի մթնոլորտի սերմանում է:

✔ Նռնակներից մեկն ընկել է ծավալվող իրադարձությունները լուսաբանող լրատվամիջոցների ներկայացուցիչների խմբի մեջ, որոնց եւս չեն նախազգուշացրել կիրառվելիք հատուկ միջոցների մասին: Խոչընդոտվել է լրագրողների մասնագիտական գործունեության իրավունքը. կան մեծաթիվ տուժածներ:

✔ Տարբեր ահազանգերի համաձայն՝ շտապ բուժօգնության ավտոմեքենաները չեն հասել ժամանակին, եւ մարդիկ ստիպված են եղել ընդհուպ մինչեւ 1 ժամ սպասել արնածոր վերքերով:

➢ Այս եւ շատ այլ աղաղակող բռնարարքների վրա միջազգային իմ գործընկերների ուշադրությունն եմ հրավիրել՝ ներկայացնելով մարդու իրավունքների տարաբնույթ խախտումների մասին հստակ փաստեր:

✔ Տեղի ունեցածը պետք է ստանա արժանի գնահատական բոլոր կողմերից, այդ թվում՝ տեղական մակարդակով:

➢ ՀՀ գլխավոր դատախազին եւս դիմում եմ հասցեագրել՝ քրեաիրավական գնահատականի ակնկալիքով»:

ՌԴ ԱԳՆ-Ն ՄԵԿՆԱԲԱՆԵԼ Է

Մոսկվան ակնկալում է, որ Երեւանը կհասկանա, որ ՀԱՊԿ պլատֆորմը ընձեռում է բոլոր հնարավորությունները համագործակցության համար տարածաշրջանային անվտանգության ապահովման հարցերում, «ՌԻԱ Նովոստի»-ին ասել է ՌԴ փոխարտգործնախարար Միխայիլ Գալուզինը՝ մեկնաբանելով կազմակերպության արտաքին գործերի խորհրդի նիստին Հայաստանի չմասնակցելը:

«Մենք հուսով ենք, որ մեր հայ գործընկերները, այնուամենայնիվ, կհասկանան, որ տարածաշրջանային անվտանգության ապահովման ամենաարդյունավետ մեթոդը տարածաշրջանային պետությունների համագործակցությունն է, եւ ՀԱՊԿ հարթակը դրա համար բոլոր հնարավորություններն է տալիս», - ասել է Գալուզինը:

Ավելի վաղ ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինյանը հայտարարել էր, որ երկիրը դուրս կգա ՀԱՊԿ-ից, երբ իշխանությունը անհրաժեշտ համարի:

«Ո՞Վ ՊԵՏՔ Է ԼՈՒԾԻ ՄԵՐ ՀԱՐՑԵՐԸ». ՓԱՇԻՆՅԱՆ

«Բա մենք մեր հարեւանների հետ չկարողանա՞նք հարց լուծել: Ամեն անգամ գնանք, ուրիշ տեղից մարդ բերենք, ասենք՝ եկեք մեր հարեւանի հետ հարց լուծեք: Մեկ-երկու-երեք անգամ, չորրորդ անգամ ասում են՝ լավ, սպանեցիք, կարո՞ղ է՝ մենք, մեր գործերը թողած, պիտի գանք, ձեր չափարների հարցը լուծենք: Մենք կլուծենք մեր չափարների հարցը», - ասել է նա:

Փաշինյանը համոզված է՝ ճիշտ բան է անում ու անում է քաղաքացիների համար. «Անում եմ ձեզ համար. բեռ է, այս բեռը ես պետք է տանեմ»:

ՊԱՏԳԱՄԱՎՈՐՆԵՐԸ ՄԵԿՆՈՒՄ ԵՆ ՖՐԱՆՍԻԱ

Հայաստանի ԱԺ պատվիրակությունը հունիսի 23-28-ը կգործուղվի Ֆրանսիա:

ԱԺ պատգամավորները Ստրասբուրգ քաղաքում կմասնակցեն Եվրոպայի խորհրդի խորհրդարանական վեհաժողովի (ԵԽԽՎ) տարեկան նստաշրջանի երրորդ մասի աշխատանքներին:

ArmLur.am-ը տեղեկացավ, որ պատվիրակության կազմում լինելու են ԱԺ փոխնախագահ Ռուբեն Ռուբինյանը, ՔՊ խմբակցության պատգամավորներ Վլադիմիր Վարդանյանը, Սոնա Ղազարյանը, Արուսյակ Ջուլհակյանը, Հռիփսիմե Գրիգորյանը, «Հայաստան» խմբակցության պատգամավորներ Արմեն Գրիգորյանը, Արմեն Ռուստամյանը եւ «Պատիվ ունեմ» խմբակցության ղեկավար Հայկ Մամիջանյանը:

ԻՐԱՎԻՃԱԿ

ՁԵՐԲԱԿԱԼՈՒՄՆԵՐԸ՝ ՈՉ ԻՐԱՎԱՉԱՓ

Կոտայքի մարզի Չարենցավան նստավայրի դատարանը (նախագահող դատավոր՝Ա. Հարությունյան) բավարարել է Իշխան Գեւորգյանի եւ Հրաչյա Թովմասյանի բողոքները:

Փաստաբան Վարազդատ Հարությունյանը հայտնել է, որ Իշխան Գեւորգյանի եւ նրա 4 ընկերների ձերբակալումներն էլ ճանաչվել են ոչ իրավաչափ:

ՊԱՏԺԱՄԻՋՈՑՆԵՐԻ ՓԱԹԵԹ

ԵՄ անդամ երկրների մշտական ներկայացուցիչները հինգշաբթի կայացած նիստում համաձայնեցրել են Ռուսաստանի դեմ պատժամիջոցների նոր՝ 14-րդ փաթեթը, տեղեկացրել է ԵՄ Խորհուրդում նախագահող Բելգիան:

«ԵՄ մշտական ներկայացուցիչները համաձայնեցրին պատժամիջոցների զգալի եւ բովանդակալից 14-րդ փաթեթը՝ ի պատասխան Ուկրաինայի դեմ ռուսական ագրեսիայի: Այդ փաթեթը նախատեսում է նոր միջոցներ եւ ուժեղացնում արդեն գոյություն ունեցող սահմանափակումների գործողությունը՝ փակելով դրանք շրջանցելու հնարավորությունը», - նշվել է բելգիական նախագահության X ցանցի հաղորդագրությունում:

ԿԱՌՈՒՑՈՂԱԿԱՆ ԱՌԱՔԱՐԿՆԵՐ ԵՆ ՆԵՐԿԱՅԱՑՎԵԼ

ՀՀ ԱԳ նախարար Արարատ Միրզոյանն իր լիտվացի գործընկեր Գաբրիելիուս Լանդսբերգիսի հետ համատեղ մամուլի ասուլիսում խոսել է Հարավային Կովկասում խաղաղության, տեւական կայունության հաստատման, հարեւանների հետ հարաբերությունների կարգավորման գործընթացից:

«Ինչպես գիտեք՝Ադրբեջանի հետ սկսել ենք սահմանազատման գործընթացը, եւ այժմ շատ կարեւոր է ապահովել այս գործընթացի շարունակականությունը, տարածքային ամբողջականության փոխադարձ ճանաչումը, քանի որ դա կենսական նշանակություն ունի սահմանին խաղաղության հաստատման եւ ապագայում ցանկացած սադրանքից խուսափելու համար: Ամենակարեւորն ավարտին հասցնելն է Հայաստանի եւ Ադրբեջանի միջեւ խաղաղության պայմանագիրը: Մենք Ադրբեջանին ուղարկել ենք շատ կառուցողական առաջարկներ, պատրաստ ենք առաջիկա ամսվա ընթացքում ավարտուն տեսքի բերել պայմանագիրը, ինչպես նախկինում առաջարկել ենք: Ցավոք, ադրբեջանական կողմից առայժմ արձագանք չկա: Ավելին՝ Ադրբեջանը նոր խնդիրներ է առաջ քաշում, ինչն առնվազն հարցեր է առաջացնում մեր տարածաշրջանում իրական խաղաղության հաստատման նպատակի առնչությամբ անկեղծ լինելու հարցում», - ասել է Միրզոյանը:

Նա խոսել է նաեւ «Խաղաղության խաչմերուկ» ծրագրից՝ ընդգծելով, որ դրա կյանքի կոչումը կարող է մեծ օգուտներ բերել ոչ միայն տարածաշրջանին, այլեւ դրա սահմաններից դուրս:

ՔԱՆԻ՞ ՄԼՆ ՀԱՅ ԿԱ ԱՇԽԱՐՀՈՒՄ

ՏԵՂՅԱԿ ՉԷ ՄԱՐԴԱՀԱՄԱՐԻՑ

ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինյանը կառավարությունում երեկ հյուրընկալել է Հայաստանի Հանրապետության պետական կառավարման մարմիններում սփյուռքի մասնագետների ներգրավման՝ «ի Գործ» ծրագրի մասնակիցներին:

Խոսելով ամենատարբեր թեմաների մասին, վարչապետն անդրադարձել է նաեւ սփյուռքում բնակվող հայերի թվին:

«Միշտ չէ, որ թվաբանությանը մեծ նշանակություն ենք տալիս, այս վերջերս գլխումս հարց ծագեց, որ անընդհատ գրում ենք՝10 մլն հայ, մի տեղ կամ այդ հայերի ցուցակը. համոզված եմ, որ չկա:

Այստեղ էլի սրբացման ֆենոմոնն է, այդ թիվը սուրբ է, հանկարծ չկպչե՛ք... Ո՛չ ավելանում է, ո՛չ՝ պակասում, չես կարող փոխել:

Մեկն ասի՝10 մլն չէ, 10 մլն 561 հազար է, բոլորը կիարձակվեն, կասեն՝ այ տգետ, այ դիլետանտ, դու որտեղի՞ց գիտես, ո՞վ է հաշվել, եւ այլն: Մեկն ասի՝ չէ, 9 մլն 200 հազար է, կասեն՝ այ ստահակ, դու նսեմացնում ես հայերի համաշխարհային ազդեցությունը, դու գրչի մի հարվածով 800 հազար հայի ջնջեցիր», - ասել է վարչապետը:

Ըստ Փաշինյանի՝ սա մեր իրականությունն է, որի մասին պետք է խոսել:

Խոսենք իրականության մասին, որն առկա է պաշտոնական հայտարարություններում եւ ներկայացնենք վիճակագրություն:

Համաձայն Time to Analyze անկախ վերլուծական կենտրոնի իրականացրած ուսումնասիրությունների արդյունքների՝ աշխարհում հայերի թիվն անցնում է 10 միլիոնից:

«Հաշվարկներն իրականացվել են աշխարհի տարբեր երկրներում գործող հայկական կառույցների, ինչպես նաեւ միգրացիոն ծառայությունների տրամադրած տվյալների հիման վրա:

Ըստ այդմ՝ պարզվել է, որ ընդհանուր առմամբ աշխարհում ապրում է 10.297.770 հայ, որից 8.140.500-ը ապրում են Հայաստանի եւ Արցախի սահմաններից դուրս:

Ամենախոշոր հայկական համայնքները գտնվում են ԱՄՆ-ում, Ռուսաստանում, Ֆրանսիայում, Իրանում, Սիրիայում Լիբանանում եւ Արգենտինայում», - գրում է օրաթերթը:

Կից նկարում պատկերված է հայկական սփյուռքի համայնքների քարտեզը (խմբ. նկարը տե՛ս ArmLur.am կայքում)՝ ըստ սփյուռքի գործերի գլխավոր հանձնակատարի գրասենյակի եւ կից գրված է.

«Աշխարհի ավելի քան 100 երկրներում բնակվում է շուրջ 7 մլն հայ, գործում են տասնյակ համահայկական ու հոգեւոր, հարյուրավոր համայնքային ու հայրենակցական կառույցներ, լրատվամիջոցներ, շուրջ 1000 մեկօրյա եւ ամենօրյա դպրոցներ, գիտական ու կրթական հաստատություններ, մարզական ու մշակութային միություններ, բարեգործական ու հասարակական-քաղաքական կազմակերպություններ:»

Համաձայն Worldo meters օնլայն տվյալների հավաքագրման կայքի՝ այս պահին Հայաստանում բնակվում է 2 մլն 777 հազար մարդ, Հայաստանում իրականացված մարդահամարի տվյալները նշվածից շատ չեն տարբերվում: Եթե Սփյուռքի գործերի գլխավոր հանձնակատարի գրասենյակի ներկայացված 7 միլիոնին գումարենք ՀՀ բնակչության թվին, ապա կտեսնենք, որ գուցե հայերի քանակն աշխարհում չի հատում 10 միլիոնը, սակայն ձգտում է դրան:

Ամբողջ աշխարհում տարբեր գնահատականներով, նաեւ միջազգային մամուլի, հայերի ընդհանուր թիվը կազմում է 7-ից 9 միլիոն մարդ, որոնց կեսից պակասն է ապրում Հայաստանում:

Ստացվում է, որ ՀՀ վարչապետը տեղյակ չէ սեփական երկրում ծնված, սակայն որոշ ժամանակ անց երկիրը լքած հայերից: Հավելենք, որ հենց այս իշխանությունների օրոք վերացվեց սփուռքի նախարարությունը եւ ստեղծվեց սփյուռքի գործերի գլխավոր հանձնակատարի գրասենյակը, որը ակնհայտ նվազ գործուղություններ է իրականացնում նախկին նախարարության հետ համեմատությամբ: Հիշեցնենք, որ իշխող խմբակցության պատգամավոր Անդրանիկ Քոչարյանն էլ թեականորեն էր վերաբերվել Հայոց Ցեղասպանության եղելությանը: Ստացվում է, որ իշխանության աշխատանքն է դարձել ցուցակներ ստուգելու պահանջներ դնելը:

ԷՄՄԱ ՄԻՔԱՅԵԼՅԱՆ

ՕՐՎԱ ԽՃԱՆԿԱՐ

ԲԱՆԱՎՈՐ ԴԻՏՈՂՈՒԹՅՈՒՆ

«Ժողովուրդ» օրաթերթը գրել էր՝ Դիանա Գասպարյանի սկեսուրին պատկանող ապօրինի գույքի մասով ուսումնասիրություն է սկսվել, իսկ Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովը դիմել էր դատախազություն:

Իսկ այս անգամ, «Փաստինֆո»-ի փոխանցմամբ, հայտնի դարձավ, որ կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովը կարճել է Վաղարշապատի համայնքապետ Դիանա Գասպարյանի ընտանիքի անդամների վերաբերյալ վարչական վարույթը: Գասպարյանի հոր եւ եղբոր՝ Մնացական եւ Ժորա Գասպարյանների վերաբերյալ ԿԿՀ-ն վարչական վարույթ էր հարուցել՝ նրանց կողմից հայտարարագիրն օրենքով սահմանված ժամկետում չներկայացնելու պատճառով:

Օրենքով սահմանված ժամկետը լրանալուց հետո՝ 30 օրվա ընթացքում, ԿԿՀ ծանուցման հիման վրա Գասպարյանները պետք է ներկայացնեին եկամուտների եւ ծախսերի հայտարարագրերը, ինչը չի արվել: Ըստ այդմ՝ այդ ժամկետի ավարտից հետո՝ հունիսի 14-ին, հանձնաժողովում նախատեսված էր վարչական իրավախախտումների վերաբերյալ գործի քննությունը, սակայն, ինչպես պարզվեց, գործի քննությունից առաջ Գասպարյաններն արդեն ներկայացրել են հայտարարագրերը: Այս հանգամանքները նկատի ունենալով՝ ԿԿՀ-ն կարճել է վարչական վարույթը՝ հայտարարելով բանավոր դիտողություն եւ ազատելով վերջիններիս պատասխանատվությունից:

Եթե նշված խախտումները թույլ տային ընդդիմադիր հայայցքներ ունեցող անձինք, ապա նրանց նկատմամբ կկիրառվեր տույժ կամ համապատասխան պահանջ, իսկ իշխանական թեւի ներկայացուցիչների հանդեպ կիրառվում է բանավոր դիտողություն:

Նախկինում ավելի խիստ էր սահմանված հայտարարագրման խախտումների տուգանքները, հարուցված վարույթները քննվում էին ամենայն մանրամասնությամբ, սակայն վերջին տարիներին իշխանությունների «սրտի» կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովը, որին այդպես էլ նախագահ չընտրեցին, համապատասխան ընթացք չի տալիս հայտարարագրերում սխալմունք թույլ տված իշխանականներին:

ՊԱՀԱՆՋ

Խաղաղ պայմաններում մահացած զինծառայողների ծնողները կառավարության մոտ են եկել՝ պահանջելու իրավապահներից բացահայտելու իրենց որդիների սպանության գործերը: Ծնողներին է մոտեցել ԲՏԱ նախարար Մխիթար Հայրապետյանը:

Մահացած զինծառայող Վալերիա Մուրադյանի մայրը նախարարին ասաց, որ գլխավոր դատախազ Աննա Վարդապետյանն իրենց ստել է. «Վարչապետ Նիկոլ Փաշինյանը մեր որդիների գործերով ստեղծել էր հանձնաժողով՝ 6 իրավաբանից բաղկացած: Խմբի մեջ էր նաեւ Աննա Վարդապետյանը, ասում էր, որ սրանք սպանություններ են, երբ նշանակվեց գլխավոր դատախազ, մեզ խոստացավ, թե ոչ մի պաշտոնական վարկած չի համապատասխանում իրականությանը, ասաց՝ գործերը միանշանակ վերաորակվելու են եւ հոդվածները կփոխվեն, ոչինչ չարեց, իր խոստումը չպահեց:

Գլխավոր դատախազը ստում է: Մինչեւ մեր երեխեքի հանցագործների չպատժվեն, մենք չենք հանգստանալու: Ասում են՝ իրեղեն բոլոր ապացույցները վերացված են, դեպքի վայրը վերացված է, հիմա բա ի՞նչ են քննում: Եթե դու համոզված ես, որ սպանություն է տեղի ունեցել, ինչո՞ւ ես տեղումդ նստել: Այս քրեական գործերին լուծում տվեք, գնանք մեր սուգը սգանք: Եթե Ղարաբաղը Ադրբեջանինն էր, ինչո՞ւ երեխայիս տարան ու հոշոտեցին»:

Նախարարը, ծնողների պահանջը լսելուց հետո, խոստացավ հարցը բարձրացնել Նիկոլ Փաշինյանին:

ՀԱՆՑԱԳՈՐԾՆԵՐԻՆ ԴԵՌ ՓՆՏՐՈՒՄ ԵՆ

ՀԱՐՑԱՔՆՆՎԵԼ Է «ՖԱԶԻ» ԸՆԿԵՐԸ

«Ժողովուրդ» օրաթերթի տեղեկությունների համաձայն՝ ՀՀ ֆինչական կոմիտեն հարցաքննության է հրավիրել հունիսի 11-ին ֆրեական հեղինակություն Սերգեյ Գրիգորյանի՝ «ֆազի» հետ նույն մեքենայում գտնվող անձին, որը եղել է նրա ընկերը՝ Բորիս Սիմոնյանը: Վերջինս իրավապահներին պատմել է, թե ուր են գնացել. դեռքի օրը, լինելով շինարարների փողոցում, պատրաստվում էին տուն գնալ, որը մի քանի մետրի վրա է գտնվել այդ տարածից: Ըստ նրա ցուցմունքի, երբ տեսել է ավտոմատները, անմիջապես գլուխը կախել ու փորձել է թաքնվել մեքենայի մեջ:

Նկատենք, որ քրեական հեղինակություն «ֆազի» սպանությունից անցել է 10 օր, սակայն իրավապահ համակարգը դանդաղում է աղմկահարույց քրեական գործի բացահայտման հարցում, ինչը խիստ կասկածների տեղիք է տալիս՝ ինչու են լռում իրավապահները, եւ ինչու դեպքից 9 օր անց անգամ չկա դեռ կասկածյալ:

Քրեական հեղինակություն Սերգեյ Գրիգորյանի՝ «ֆազի» սպանության բացահայտմանը նաեւ ներգրավվել է ազգային անվտանգության ծառայությունը:

«Ժողովուրդ» օրաթերթին հասած լուրերի համաձայն՝ վերջիններս օգնում են քրեական հետախուզությանը՝ սպանության բացահայտման համար:

«Ժողովուրդ» օրաթերթը գրել էր, որ ըստ նախնական վարկածի՝ Սերգեյ Գրիգորյանին կյանքից զրկել են վարձու մարդասպաններ, որոնք եղել են երկուսը: Նրանք գտնվել են OPEL մակնիշի ավտոմեքենայի մեջ, որը գողացված է եղել: Ի դեպ, հայտնել էինք, որ Սերգեյ Գրիգորյանի գործով 2 տարի առաջ կալանավորվել էր դատավոր Արուսյակ Ալեքսանյանը: Բանն այն է, որ 2022 թվականին Կենտրոնի դատարանում միջադեպ էր եղել, ու միջադեպի «հերոսներն» էին կրիմինալ աշխարհում հայտնի Ռուստամ Ստեփանյանը՝ «չաղ Ռուստամ» մականվամբ եւ Սերգեյ Գրիգորյանը՝ «ֆազ» մականվամբ: Միջադեպը տեղի էր ունեցել Կենտրոն եւ Նորք-Մարաշ շրջանների ընդհանուր իրավասության դատարանի բակում:

«Ֆազի» եւ «չաղ Ռուստամի» կողմնակիցներն իրար ծեծել էին: Ծեծկռտուքին միջամտել էին ոստիկանության աշխատակիցները, որից հետո «ֆազը» դիմել էր փախուստի, իսկ «չաղ Ռուստամը» ավելի ուշ ներկայացել էր ոստիկանություն:

Քրեական գործ հարուցվեց, սակայն Ռուստամին չկալանավորեցին, իսկ Սերգեյ Գրիգորյանը կալանավորվեց. ավելի ուշ դատավոր Արուսյակ Ալեքսանյանը նրան ազատ արձակեց՝ 2,5 միլիոն գրավի դիմաց: Իրավապահները դատավորի քայլը համարել էին ապօրինի, եւ Ալեքսանյանը կալանավորվել էր: Ներկայումս դատավորն ազատության մեջ է, սակայն դատարանում քննությունը պաշտոնական լիազորությունների չարաշահման գործով դեռ շարունակվում է:

Հավելենք, որ «Ֆազի» սպանության գործով այս պահին բազմաթիվ վարկածներ են քննվում, այդ թվում՝ «չաղ Ռուստամի» հետ նրա հարաբերությունները. բայց սպանության բացահայտման տեմպերը հուսադրող չեն»:

ՔՆԱՐ ՄԱՆՈՒԿՅԱՆ

ՈՒՐ ԵՆ ՊԱՏՎԻՐԱՏՈՒՆԵՐԸ

ԽԱՓԱՆՄԱՆ ՄԻՋՈՑԸ ՓՈԽՎԵԼ Է

Նախկին ՔՊ-ական Թաթուլ Ասիլյանի առանձնատան վրա արձակված կրակոցների գործով միակ մեղադրյալի մասով: Մեզ հայտնի դարձավ, որ գործով միակ կալանավորվածի խափանման միջոցը փոխվել է, եւ նա ներկայումս ընդամենը վարչական վերահսկողության տակ է: Ու սա էլ դեռ քիչ չէ, միակ կալանավորվածը պնդում է, որ կատարվածի հետ կապ չունի: Իսկ ահա, նախկին ՔՊ-ական Թաթուլ Ասիլյանը իրավապահներին հայտնել է, որ որեւէ մեկին չի կասկածում իր տան կրակոցների գործով եւ չի կարողանում հասկանալ, թե ով կարող էր նման բան անել:

ՀՀ քննչական կոմիտեն, Թաթուլ Ասիլյանից բացի, հարցաքննել էր նաեւ նրա կնոջը: Եվ ահա, մեզ հասած բացառիկ տեղեկությունների համաձայն՝ Ասիլյանի կինը հայտնել է իրավապահներին, որ կասկածում է, թե Հարություն Հարությունյանն է իր տան վրա կրակել:

Ահա, Ասիլյանի կնոջ ցուցմունքի հիման վրա էլ, Հարություն Հարությունյանին կալանավորել են: Սակայն վերջինս պնդում է, որ կատարվածի հետ կապ չունի:

Հիշեցնենք՝ այս տարվա հունվարի 14-ին կրակոցներն էին արձակվել ՔՊ-ից հեռացված Թաթուլ Ասիլյանի տան վրա: Իրավապահների գործողությունների արդյունքում կալանավորվել էր Հարություն Հարությունյանը, որը առավել հայտնի է Ուջանցի Հարութ անունով: Ըստ լուրերի՝նա Ասիլյանի կնոջ քրոջ ընկերն է»:

Ք. ՄԱՆՈՒԿՅԱՆ

ԼՈՒՐԵՐ

ՎԻՃԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ՝ ՀԱՐԵՎԱՆՆԵՐԻ ՄԻՋԵՎ

Հունիսի 18-ին թեժ իրավիճակ է եղել Եղվարդ քաղաքի Չարենցի փողոցում:

Մասնավորապես, «Ժողովուրդ» օրաթերթին հայտնի դարձավ, որ վերոնշյալ փողոցի մի խումբ հարեւաններ վիճել են, ինչի ժամանակ Թ.Մ-ն բահով հարվածել է Ս.Գ-ի գլխին՝ պատճառելով վնասվածք:

Իսկ ինչից է սկսվել վեճը:

Բանն այն է, որ Ս.Գ-ն ունի որսորդական հրացան ու պարբերաբար հրացանով իր հողամասում կրակոց է արձակում դեպի օդ, ու այդ իրավիճակից հարեւանների երեխաները վախեցել են: Արդյունքում՝ սկսվել է թեժ վիճաբանություն, ու բանը հասել է բահերով միմյանց գլխին տալուն:

«Ժողովուրդ» օրաթերթին հայտնի դարձավ, որ իրավապահները առգրավվել են զենքը ու կատարվում է քննություն:

ՏՎՅԱԼՆԵՐ

Ըստ ոստիկանության օպերատիվ հաղորդագրությունների ամփոփագրերի՝ հունիսի 19-20-ը ՆԳՆ ոստիկանության ստորաբաժանումները բացահայտել են հանցագործության 128 դեպք:

Հայտնաբերվել է 6 հետախուզվող, կամավոր ներկայացել՝ 3-ը:

Նախկինում կատարված հանցագործության հանցագործության դեպքերից բացահայտվել է բնակարանային գողության 1 դեպք:

Անցած 1 օրվա ընթացքում հանրապետությունում արձանագրվել է ճանապարհատրանսպորտային 15 պատահար. 1 մարդ զոհվել է, 17-ը՝ ստացել տարբեր աստիճանի մարմնական վնասվածքներ:

ՀԵՏԱԽՈՒԶՎՈՒՄ ԷՐ ՄՈՍԿՎԱՅԻ ԻՐԱՎԱՊԱՀՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ

Ոստիկանության Էրեբունու բաժնի եւ Նուբարաշենի բաժանմունքի ծառայողների համատեղ ձեռնարկած օպերատիվ-հետախուզական միջոցառումների շնորհիվ հունիսի 19-ին Խորենացու փողոցում հայտնաբերվել եւ բաժին է ներկայացվել 40-ամյա Սեյրան Ն.-ն: Նա 2019 թ. հոկտեմբերի 15-ից ՌԴ Մոսկվա քաղաքի իրավապահ մարմինների կողմից հետախուզվում էր կողոպուտի եւ շորթման մեղադրանքով:

Հայտնաբերման մասին հայտնվել է հետախուզումը նախաձեռնողին եւ դատախազությանը:

ՀԱՅՏՆԱԲԵՐՎԵՑ ԱՆՑԱԿԵՏՈՒՄ

Հունիսի 19-ին՝ ժամը 23:50-ին, Բագրատաշենի սահմանային վերահսկողության բաժնից ոստիկանության Նոյեմբերյանի բաժին է տեղափոխվել 46-ամյա Օլգա Մ.-ն: Նա ապրիլի 4-ից ՌԴ իրավապահների կողմից հետախուզվում էր թմրամիջոցներ պատրաստելու եւ իրացնելու մեղադրանքով:

Խափանման միջոցը՝ ստորագրություն:

● *Ըստ ոստիկանության տվյալների՝հունիսի 19-ից 20-ը ՀՀ ՆԳՆ ոստիկանության ստորաբաժանումների կողմից բացահայտվել է հանցագործության 128 դեպք, որից 1-ը՝նախկինում կատարված:*

ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

ՄԱՐԶ

ՃՈԽ ԿԵՐՊՈՎ ՊԱՐԳԵՎԱՏՐՎՈՒՄ ԵՆ

Ապրիլի 30-ին Տավուշի մարզպետ Հայկ Ղալումյանին տեղեկատվական հարցում ենք ուղարկել՝ նրան հարցնելով, թե մարզում որքա՞ն վթարային տներ ու բազմաբնակարան շենքեր կան: Մարզպետարանից պատասխանել են, որ Տավուշի մարզի վթարային տների եւ բազմաբնակարան շենքերի ցանկը ենթակա է թարմացման, այն ըստ կարգի պարբերաբար անհրաժեշտ է գույքագրել եւ թարմացնել, որի մասին մարզպետարանը հանձնարարականներ է ուղարկել մարզի համայնքներ: Հունիսի 3-ին Տավուշի մարզպետին նոր հարցում ենք ուղարկել՝ նշելով, որ «անցել է բավականին ժամանակ, հիմա կարո՞ղ եք տրամադրել վթարային տների եւ բազմաբնակարան շենքերի ցանկը»: Մարզպետարանից պատասխանել են, որ Տավուշի մարզի վթարային տների եւ բազմաբնակարան շենքերի վերաբերյալ մարզպետի աշխատակազմը դեռեւս տեղեկություն այդ առումով չունի: Ահա այսպես անտեղյակ են Տավուշի մարզպետարանում, սակայն դա չի խանգարել, որ իրենց վատ աշխատանքի համար 2023 թվականին Տավուշի մարզպետարանի պաշտոնյաները պարգեւատրվեն 71 միլիոն 960 հազար դրամի չափով, այս տարի էլ պետբյուջեից մարզպետի, մարզպետարանի պաշտոնյաների ճոխ պարգեւատրումները շարունակվում են:

ԱՌԵՎԱՆԳՄԱՆ ԳՈՐԾՈՎ

Իջեւանում, Տավուշի մարզի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանում շարունակվում է ԱԺ նախկին պատգամավոր, ՀՅԴ Գերագույն մարմնի նախկին անդամ Սուրեն Մանուկյանի դատավարությունը: Նա մեղադրվում է խմբի կազմում «Ազատ դեմոկրատներ» կուսակցության նախագահ, գործարար Խաչատուր Քոքոբելյանի հորը առեւանգելու եւ վերջինիս որդիներից առանձնապես խոշոր չափերի գումար շորթելու մեջ: Քրեական գործով Ս. Մանուկյանի նկատմամբ որպես խափանման միջոց է կիրառվել կալանավորումը, նա, 2022 թ. օգոստոսի 11-ից սկսած, ազատազրկված է: Դատարանի որոշմամբ՝ Ս. Մանուկյանը մինչեւ 2024 թվականի հուլիսի 30-ը գտնվելու է կալանքի տակ: Նա իրեն առաջադրված մեղադրանքը համարում է շինծու, այն չի ընդունում եւ իրեն մեղավոր չի ճանաչում: Սուրեն Մանուկյանը դատարական վերջին մատնանշել է փաստը, որ նախաքննական մեղադրանքի մեջ նշված է եղել՝ Արմեն Քամալյանին, երբ կալանքի տակ էին վերցնում, քննիչը ներկայացրել էր դատարանին, որ հեռախոսային տեղորոշմամբ՝ ենթադրյալ առեւանգման օրը, իր եւ Արմեն Քամալյանի հեռախոսները եղել են Նոյեմբերյան քաղաքում: «Սակայն մեղադրական եզրակացության մեջ նշվում է, որ Արմեն Քամալյանը ենթադրյալ առեւանգման օրը եղել է Իջեւանում՝ իր տանը: Արդյո՞ք դա կեղծիք է, թե՞ կեղծիք չէ»: Դատական հաջորդ նիստը նշանակված է հունիսի 26-ին:

ՈՍԿԱՆ ՍԱՐԳՍՅԱՆ
Տավուշ

ՔՈԱՖ

ԱՆԳԼԵՐԵՆԻ ՆՈՐ ԴԱՍԱԳՐՔԵՐ

Հանրակրթական դպրոցներ մուտք կգործեն երեք նոր անգլերենի դասագրքեր: «Հայաստանի մանուկներ» հիմնադրամի (ՔՈԱՖ) թիմի կողմից 3-րդ, 6-րդ եւ 8-րդ դասարանների համար մշակված անգլերենի դասագրքերը հաղթող են ճանաչվել կրթության, գիտության, մշակույթի եւ սպորտի նախարարության հայտարարված հանրակրթական դպրոցների նոր դասագրքերի բաց մրցույթում: Այսպիսով՝ դրանք երաշխավորվել են ԿԳՄՍՆ-ի կողմից եւ 2024-2025 ուսումնական տարվանից սկսած հանրապետության ամբողջ տարածքում կկիրառվեն որպես հիմնական դպրոցական դասագրքեր:

Այս նվաճումը ՔՈԱՖ-ի անգլերենի ծրագրերի թիմի եւ դասագրքերի հեղինակ-ուսուցիչների նվիրման եւ աշխատանքի արդյունք է: Վերջիններիս ներգրավվածությունը հատկապես էական է դասավանդման երկարամյա փորձի տեսանկյունից: Դպրոցականների կարիքների եւ մարտահրավերների մասին ունեցած նրանց պատկերացումը մեծապես օգնել է արդիական, հետաքրքիր ու ներգրավող ուսումնական նյութերի մշակման գործում:

Դասագրքերի կազմման ընթացքում Հայաստանում ԱՄՆ դեսպանատունը եղել է ՔՈԱՖ-ի վստահելի ու կարեւոր գործընկերը: Վերջին երկու տարիների ընթացքում դրանց բովանդակությունը փորձարկվել եւ բարելավվել է հիմնադրամի ու դեսպանատան համատեղ անգլերեն կրթական ծրագրերի շրջանակներում: Այն ուսանողները, որոնք արդեն իսկ սովորել են այդ նյութերով, ոչ միայն բարելավել են իրենց լեզվական գիտելիքները, այլեւ ձեռք են բերել արժեքավոր հմտություններ՝ ինչպիսիք են հանրային խոսքը, քննադատական մտածողությունը եւ հետազոտական կարողությունները:

ՔՈԱՖ-ի անգլերեն նոր դասագրքերի առանցքային կետերից են ժամանակակից մեթոդաբանությունն ու բովանդակությունը, որոնց շնորհիվ դրանք ինտերակտիվ ու ներգրավող են: Այս մոտեցումը դասապրոցեսը դարձնում է առավել գրավիչ ու հետաքրքիր, իսկ ուսումնառությունը հեռվում ոչ այնքան տնային աշխատանքների, որքան դասարանում ստացած գիտելիքի եւ այն գործնականում կիրառելու վրա:

«ՔՈԱՖ-ի համար սա հսկայական նվաճում է», - նշում է ՔՈԱՖ-ի գործադիր տնօրեն Լիանա Ղալթաղչյանը, - «Անգլերենի գերազանց գիտելիքներ փոխանցելուց զատ՝ մեր դասագրքերը նաեւ զարգացնում են այնպիսի կարեւոր հմտություններ, ինչպիսիք են անկախ մտածողությունը, հրապարակային խոսքը, վերլուծական մտածողությունը, թիմային աշխատանքը եւ հետազոտական կարողությունները: Մեզ համար մեծ պատիվ է, քանի որ մեր մշակած դասագրքերը վճռորոշ դեր կունենան գալիք սերնդի պայծառ ապագայի ուրվագծման գործում»:

ԱՆՆԱ ՍՐԱՊԻՈՆՅԱՆ

ԼՈՒՐԵՐ

ԲԵԶՈԱՐՅԱՆ ԱՅԾԵՐԻ ԲԱԶՄՈՒԹՅՈՒՆ՝ ՀԱՅԿԱԿԱՆ ԼԵՌՆԵՐՈՒՄ

Կովկասյան կենսաբազմազանության ապաստարանի տարածքում (CWR) նկարահանված տեսանյութում բեզոարյան այծերի բազմությունն ազատ շրջում է հայկական լեռներում, ինչը վկայում է այն մասին, որ կենդանիները պաշտպանված են ու ապահով:

Իրականում բեզոարյան այծերի ընդհանուր պոպուլյացիան դժվար է հստակ գնահատել, քանի որ կան երկրներ, որոնց մասին տվյալները բացակայում են: Այս մասին տեղեկանում ենք Բնության պահպանության միջազգային միության (IUCN) ուսումնասիրություններից: Որոշ տեղերում նրանց քանակը կտրուկ նվազում է, բայց ինչպես հայտնում է IUCN-ը՝ որոշ տարածքներում իրականացված լավ պաշտպանության շնորհիվ բեզոարյան այծերի քանակը կայունացել է:

Այդպիսի տարածք է դարձել նաեւ Հայաստանը, որտեղ իրականացված լայնածավալ, քրտնաջան ու նվիրված աշխատանքի շնորհիվ հնարավոր է լինում կայունացնել բեզոարյան այծերի պոպուլյացիան:

Կովկասյան կենսաբազմազանության ապաստարանն առաջին մասնավոր պահպանվող տարածքն է Հարավային Կովկասում: Այն զբաղեցնում է շուրջ 30,000 հա տարածք: Ապաստարանը կառավարվում է Վայրի բնության եւ մշակութային արժեքների պահպանման հիմնադրամի (FPWC) կողմից: ԿԿԱ եւ հարակից տարածքներն առանցքային նշանակություն ունեն Հարավկովկասյան կենսաբազմազանության պահպանման հարցում: Այստեղ են բնակվում այնպիսի հազվագյուտ կենդանատեսակներ, ինչպիսիք են գորշ արջը, բեզոարյան այծը, սեւ անգղը, մորուքավոր անգղը, հայկական իժն ու կովկասյան հովազը: Բեզոարյան այծը գրանցված է Հայաստանի Կարմիր գրքում եւս: Տարածված են դժվարանցանելի լեռներում, Կովկասում՝ սովորաբար անտառային գոտու վերին սահմաններում: Ամռանը բարձրանում են լեռների գագաթը: Հայաստանում բազմացվում է Խոսրովի անտառում:

Բեզոարյան այծ պոլիգամ է, ապրում է հոտերով:

Բացառությամբ զուգավորման շրջանի՝ նոխազներն ապրում են առանձին: Հայաստանի Հանրապետությունում հանդիպում է բեզոարյան այծի կովկասյան ենթատեսակը:

ԱՇԽԱՏԱՆՔԸ ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐԱՊԵՍ ԿԴԱԴԱՐԵՑՎԻ

Սույն թվականի հունիսի 21-ից՝ ժամը 16:00-ից մինչեւ սույն թվականի հունիսի 24-ի ժամը 14:00-ը, տեխնիկական աշխատանքների կատարման նպատակով դադարեցվելու է Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի բանկային հաշիվների կենտրոնացված ռեեստրի աշխատանքը: Ռեեստրի աշխատանքի ժամանակավոր դադարեցմամբ պայմանավորված՝ հասանելի չեն լինի Ռեեստրից հարցման միջոցով տեղեկությունների ստուգմամբ աշխատող համակարգերի ծառայությունները, այդ թվում՝ հիփոթեքային վարկի սպասարկման համար վճարված տոկոսավճարների չափով վճարված եկամտային հարկի վերադարձման դիմումների ընդունման էլեկտրոնային համակարգը, ինչպես նաեւ զինծառայողների ապահովագրության ազգային հիմնադրամի կողմից դրոշմանիշային վճարների գումարների վերադարձման էլեկտրոնային համակարգը:

● *Անցած 1 օրվա ընթացքում հանրապետությունում արձանագրվել է ճանապարհատրանսպորտային 15 պատահար. 1 մարդ զոհվել է, 17-ը՝ ստացել տարբեր աստիճանի մարմնական վնասվածքներ:*

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ՀԱՄԱՐԱԿԱՅՆՈՒԹՅԱՆ ԾԱՆՈՒՑՈՒՄ (1)

Շրջակա միջավայրի նախարարության Ջրային ռեսուրսների կառավարման վարչության կողմից ՀՀ ջրային օրենսգրքի եւ ՀՀ Կառավարության 07.03.2003թ. N217-Ն եւ 03.08.2023թ. N1332-Ն որոշումների պահանջների համաձայնի մշակվում է «Էֆարվի Մասրիկ» ՓԲԸ-ի՝ Գեղարքունիքի մարզի Վարդենիս համայնքի Մեծ Մասրիկ բնակավայրի վարչական տարածքում կոմունալ-կենցաղային /տնտեսական/ նպատակով ստորերկրյա ջրային ռեսուրսից 0.1 լ/վ ջրառ իրականացնելու ջրօգտագործման թույլտվության ստացման նախագիծը:

Բոլոր շահագրգիռ անձինք, որոնք կցանկանան ծանոթանալ փաստաթղթի մշակման աշխատանքներին եւ փաստաթղթի նախագծի նախնական տարբերակին, կարող են աշխատանքային օրերին՝ ժամը 17-ից - 18-ը դիմել ջրային ռեսուրսների կառավարման եւ պահպանության մարմին (հասցե՝ Կառավարական 3-րդ տուն, 5-րդ հարկ):

Ծանուցմամբ ներկայացված փաստաթղթի նախագծի նախնական տարբերակի վերաբերյալ դիտողություններ եւ առաջարկություններ ներկայացնելու դեպքում փաստաթղթի քննարկումը տեղի կունենա 2024 թվականի հունիսի 26-ին՝ ժամը 16:00 -ին, հասցե՝ Կառավարական 3-րդ տուն, 5-րդ հարկ, 541 սենյակ:

Շրջակա միջավայրի նախարարություն

ՀԱՄԱՐԱԿԱՅՆՈՒԹՅԱՆ ԾԱՆՈՒՑՈՒՄ (2)

Շրջակա միջավայրի նախարարության ջրային ռեսուրսների կառավարման վարչության կողմից ՀՀ ջրային օրենսգրքի, Կառավարության 03.08.2023թ. N1332-Ն եւ ՀՀ Կառավարության 07.03.2003թ. N217-Ն որոշումների պահանջների համաձայն՝ մշակվում է Արարատի մարզի Դաշտավան գյուղի վարչական տարածքում Լեւոն Գրիգորյանի 5.24 հա սեփական հողատարածքում ստորերկրյա ջրային ռեսուրսից գյուղատնտեսական /ոռոգում/ նպատակով 4.05 լ/վ ջրաքանակով ջրառի ջրօգտագործման թույլտվության նախագիծը:

Բոլոր շահագրգիռ անձինք, որոնք կցանկանան ծանոթանալ փաստաթղթերի մշակման աշխատանքներին եւ փաստաթղթերի նախագծերի նախնական տարբերակներին, կարող են աշխատանքային օրերին՝ ժամը 17-ից - 18-ը դիմել ջրային ռեսուրսների կառավարման եւ պահպանության մարմին (հասցե՝ Կառավարական 3-րդ տուն, 5-րդ հարկ):

Ծանուցմամբ ներկայացված փաստաթղթերի նախագծի նախնական տարբերակի վերաբերյալ դիտողություններ եւ առաջարկություններ ներկայացնելու դեպքում փաստաթղթերի քննարկումը տեղի կունենա 2024 թվականի հունիսի 26-ին՝ ժամը 16:00-ին, հասցե՝ Կառավարական 3-րդ տուն, 5-րդ հարկ, 541 սենյակ:

Շրջակա միջավայրի նախարարություն

«ՎՏԲ-ՀԱՅԱՍՏԱՆ» ԲԱՆԿ

ՆՈՐ ՆՈՐՔԻ ՄԱՍՆԱՃՅՈՒՂԸ ՎԵՐԱԲԱՑՎԵԼ Է

Վերանորոգումից հետո «ՎՏԲ-Հայաստան» բանկը վերաբացել է Նոր Նորք համայնքում գործող մասնաճյուղը:

Բանկն ընդլայնել է գրասենյակի տարածքը մինչեւ 300 քմ, որտեղ կսպասարկվեն ավելի քան 15 հազար ֆիզիկական եւ իրավաբանական անձ հաճախորդներ: Մասնաճյուղում բացվել է նաեւ «Պրիվիլեգիա» սպասարկման հատուկ գոտի՝ պրեմիում ծառայությունների փաթեթի օգտատերերի համար:

Երեւան քաղաքի Նոր Նորք վարչական շրջանում թիվ 15 մասնաճյուղը գործում է 2014 թ.-ից: Հաճախորդների համար հարմարավետ պայմաններ ստեղծելու նպատակով՝ բանկը թարմացրել է գրասենյակի դիզայնը եւ ընդլայնել է վերջինիս տարածքը: Աշխատատեղերի ձեւավորումն ու դասավորվածությունը մտածված են այնպես, որ հաճախորդները ստանան անհատական մոտեցում եւ հարմարավետություն սպասարկման բոլոր փուլերում:

Մասնաճյուղի տարածքում տեղադրված են երկու բանկոմատներ, որոնք հասանելի են 24 ժամ, եւ վճարային տերմինալ, որը թույլ է տալիս իրականացնել ավելի քան 300 բանկային գործարք՝ առանց պլաստիկ քարտի կիրառության:

Վերանորոգված մասնաճյուղում հաճախորդներին հասանելի են հաշվարկադրամարկղային ծառայություններ, վարկային եւ խնայողական պրոդուկտներ եւ վճարային քարտեր: Բացվել է նաեւ առանձնացված «Պրիվիլեգիա» գոտի՝ պրեմիում ծառայությունների փաթեթի օգտատերերի համար: Այստեղ նրանք կարող են ստանալ անհատական մենեջերի խորհրդատվություն ցանկացած ֆինանսական հարցի վերաբերյալ:

«Այսօր երկրում գործում է «ՎՏԲ-Հայաստան» բանկի 53 մասնաճյուղ: Երեւանում գործում է 22 մասնաճյուղ: Մենք աշխատել ենք անել այնպես, որ դրանք գտնվեն մեր հաճախորդների համար ամենահարմար վայրերում: Մեծ ուշադրություն ենք դարձնում նաեւ մասնաճյուղերում բարձրակարգ եւ հարմարավետ սպասարկմանը: Բանկը վերափոխել է ամենապահանջված մասնաճյուղերից մեկը՝ Նոր Նորքի մասնաճյուղը, այժմ այն դարձել է ավելի ընդարձակ եւ գործում է նոր ձեւաչափով», - մեկնաբանել է «ՎՏԲ-Հայաստան» բանկի գլխավոր տնօրենի - Տնօրենության նախագահի տեղակալ Տարաս Կլադչենկոն:

Թիվ 15 մասնաճյուղը գտնվում է Նոր Նորքում՝ Գայի պողոտա 10/3 հասցեում եւ աշխատում է աշխատանքային օրերին՝ ժամը 09:00-17:00, շաբաթ օրերին՝ 10:00-14:00:

ԲԱՆԿԱՅԻՆ ՆՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ՀԱՂԹՈՂԸ ԿՄԵԿՆԻ ՓԱՐԻԶ՝ ԽԱՂԵՐԸ ԴԻՏԵԼՈՒ

«Ավելի բարձր, ավելի արագ, ավելի դիպուկ». այս կարգախոսի ներքո կայացավ «Յունիբանկի» եւ Visa-ի համատեղ արշավի եզրափակիչ միջոցառումը: «Յունիբանկի» 12 Visa քարտապաններ արշավի եզրափակիչ փուլում հաղթահարեցին տարբեր մարզական փորձություններ: Ամենաբարձր միավորներ հավաքած երկու մասնակիցները ստացան արշավի գլխավոր մրցանակը՝ ուղեւորություն Փարիզ՝ Օլիմպիական խաղերը եւ փակման հանդիսավոր արարողությանը դիտելու համար:

«Յունիբանկի» եւ Visa-ի համատեղ արշավը մեկնարկել էր 2024 թվականի մարտին: Յուրաքանչյուր ամիս բանկի քարտապանները հնարավորություն ունեցան շահելու օլիմպիական խորհրդանիշներով հուշանվերներ, օլիմպիական դիզայնով Visa քարտեր եւ դրամական մրցանակներ: Արշավին մասնակցելու համար «Յունիբանկի» Visa քարտապանները պետք է ամսական կատարեին 50 000 դրամ եւ ավելի անկանխիկ վճարումներ:

«Շատ գոհ եմ «Յունիբանկից»: Ամենալավ բանկերից մեկն է Հայաստանում՝ իր առաջարկներով, սպասարկման որակով: Շատ քչերին է հաջողվում մեկնել օլիմպիական խաղերին՝ որպես երկրպագու: Իմ կարծիքով սա լավագույն նվերներից մեկն է, կնոջս հետ սիրով կմեկնենք Փարիզ», - նշեց արշավի առաջին հաղթող Դավիթ Թովմասյանը:

Օլիմպիական խաղերը հենց Փարիզում դիտելու հնարավորություն ստացավ նաեւ Նարեկ Երիցյանը: «Մոտ 4 տարի է «Յունիբանկի» հաճախորդ եմ: Հաճելի անակնկալ էր: Ես միշտ ուրախացել եմ մեր հայ մարզիկների հաղթանակներով, ու հիանալի կլինի նրանց կողքին լինել Փարիզում եւ կիսել այդ ուրախությունը», - նշեց արշավի երկրորդ հաղթող Նարեկ Երիցյանը:

Արշավի հաղթողներին ուղեգրերը հանձնեցին «Յունիբանկի» Վարչության նախագահ Մեսրոպ Հակոբյանը եւ Օլիմպիական խաղերին Հայաստանը ներկայացնող մարզիկները՝ ըմբիշ Արսեն Հարությունյանը, մարմնամարզիկներ Արթուր Դավթյանը եւ Վահագն Դավթյանը, հրաձիգ Էլմիրա Կարապետյանը:

ՆԵՐԿԱՅԱՑՈՒՄՆԵՐԸ՝ «ՖԱՍԹ» ԲԱՆԿԻ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՄԲ

«Ֆասթ» բանկի աջակցությամբ եւ «Բալետ 2021» հիմնադրամի նախաձեռնությամբ Կարեն Դեմիրճյանի անվան մարզահամերգային համալիրում կայացել է Շառլ Ազնավուրի «Լա Բոհեմ» եւ Միշել Լեգրանի «Շերբուրգյան հովանոցներ» բալետային ներկայացումների առաջնախաղը: Այն նախատեսված էր բոլոր սերունդների ներկայացուցիչների համար:

«Լա Բոհեմ»-ն Ազնավուրի կերպարի, անցած կյանքի եւ զգացմունքների այլաբանական արտապատկերումն էր: Խորհրդանշական է՝ բալետը վերականգնվեց Ազնավուրի հոբելյանական տարում եւ լավագույնս համալրեց նրա ծննդյան 100-ամյակին նվիրված միջոցառումների շարքը:

«Շերբուրգյան հովանոցներ»-ը Միշել Լեգրանի արդեն սիրված երաժշտության ժամանակակից մեկնաբանությունն էր՝ սյուժեի, պարի եւ բեմական հագուստի յուրահատուկ ձեւավորմամբ:

«Շատ կարեւոր է մասնավոր սեկտորի աջակցությունը, որովհետեւ հենց նրանց աջակցությունն է թույլ տալիս արվեստի զարգացումը: Ակնհայտորեն նկատելի է «Ֆասթ» բանկի աջակցությունը, հատկապես՝ մշակութային միջոցառումներին աջակցելու առումով: Շատ շնորհակալ ենք, որ «Ֆասթ» բանկը մեզ էլ կարողացավ ընդգրկել այդ ցանկի մեջ», - ասել է «Բալետ 2021» հիմնադրամի տնօրեն Լիլիթ Պետրոսյանը:

«Ֆասթ» բանկի կողմից մշակութային նախագծերին աջակցությունը պարբերական բնույթ է կրում եւ Բաղալյանների ընտանիքին պատկանող ընկերությունների խմբի կորպորատիվ սոցիալական պատասխանատվության կարեւոր մաս է:

● «Ժողովուրդ» օրաթերթում եւ Armlur.am կայքում գովազդ, հայտարարություն, հաշվետվություն, ծանուցում տեղադրելու համար զանգահարել 094-455-456 հեռախոսահամարով:

ՄՇԱԿՈՒՅԹ

ՔՆՆԱՐԿՈՒՄ

ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ՀՀ կրթության, գիտության, մշակույթի եւ սպորտի նախարար Ժաննա Անդրեասյանը Գերմանիայի Դաշնային Հանրապետություն կատարած ուխտանքային այցի շրջանակում այցելել է Մյունխենի տեխնոլոգիական եւ Բունդեսվեհրի համալսարաններ:

Պատվիրակության կազմում են ԱԺ գիտության, կրթության, մշակույթի, սփյուռքի, երիտասարդության եւ սպորտի հարցերի մշտական հանձնաժողովի նախագահ Սիսակ Գաբրիելյանն ու ԿԳՄՍՆ բարձրագույն կրթության եւ գիտության կոմիտեի նախագահ Սարգիս Հայոցյանը:

ԳԴՀ բարձրագույն ուսումնական հաստատություններ այցի ընթացքում ՀՀ պատվիրակությունը քննարկել է «Ակադեմիական քաղաք» ծրագրի շրջանակում համագործակցությունը:

Մյունխենի տեխնոլոգիական համալսարանի տնօրեն Ֆրեդերիկե Հեթթինգերի եւ «Էներգիայի հետազոտություն» ծրագրի ղեկավար Ռոբերտ Շմիդթի հետ հանդիպմանը քննարկվել է, մասնավորապես, համալսարանի կառուցվածքի եւ կառավարման մոդելի հիման վրա «Ակադեմիական քաղաք» նախագծի տեխնոլոգիական կլաստերի կոնցեպտի համատեղ մշակման հնարավորությունը: ԿԳՄՍ նախարարն առաջարկել է նաեւ դիտարկել Հայաստանի ոլորտային բուհերի հետ համատեղ վերապատրաստման եւ հետազոտական ծրագրերի, ինչպես նաեւ կարճատեւ եւ երկարատեւ միջբուհական համատեղ նախագծերի մշակման եւ իրականացման հնարավորությունները:

ԿԳՄՍ նախարարի գլխավորած պատվիրակությունը նաեւ շրջայց է ունեցել Մյունխենի տեխնոլոգիական համալսարանում, այցելել տեխնոլոգիական կենտրոն, ուսումնասիրել բիզնեսի հետ համագործակցության մյունխենյան փորձը, ինչպես նաեւ հանդիպել տեղի հայ ուսանողների հետ, ծանոթացել նրանց փորձառությանը: Քննարկվել է նաեւ վերջիններիս՝ «Ակադեմիական քաղաք» ծրագրում ներգրավելու հնարավորությունը՝ ՀՀ բուհերի սովորողների հետ փորձի փոխանակման նպատակով:

Բունդեսվեհրի համալսարանի փոխնախագահ, պրոֆեսոր Կառլ Հայնց Ռենների հետ հանդիպմանը հայկական կողմը քննարկել է «Ակադեմիական քաղաք» նախագծի սպայական կլաստերի կոնցեպտի համատեղ մշակման հնարավորությունը: ՀՀ ԿԳՄՍ նախարարին ներկայացվել են Բունդեսվեհրի համալսարանի կրթական ծրագրերն ու առանձնահատկությունները, որից հետո կազմակերպվել է շրջայց կամպուսում:

Ժաննա Անդրեասյանի դիտարկմամբ՝ սպայական եւ քաղաքացիական կրթության համադրման այս օրինակն ու փորձը ակադեմիական քաղաքի նախագծի իրագործման համատեքստում կարող են ուսանելի լինել: Կողմերը քննարկել են նաեւ կադրերի պատրաստման, վերապատրաստման, Հայաստան-Գերմանիա համատեղ կրթական եւ հետազոտական ծրագրերի իրականացման հնարավորությունները:

ԿԳՄՍ նախարարի՝ Գերմանիա կատարած այցի շրջանակում նախատեսված են նաեւ մի շարք այլ հանդիպումներ:

ՀՈՒՐԻ ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ

ՀՀ ԳԱԱ

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԿԵՆՏՐՈՆԻ ՏՆՕՐԵՆԻ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆ

Սույն թվականի հունիսի 19-ին ՀՀ ԳԱԱ նախագահության նիստում ՀՀ ԳԱԱ գիտակրթական միջազգային կենտրոնի տնօրենի պաշտոնում վերընտրվեց Արմեն Սարգսյանը:

Արմեն Սարգսյանը ծնվել է 1986թ.: 2008թ. ավարտել է Հայաստանի պետական տնտեսագիտության համալսարանը: 2011թ. ստացել է տնտեսական գիտությունների թեկնածուի գիտական աստիճան: 2015թ. ստացել է իրավագիտության մագիստրոսի աստիճան:

Իր աշխատանքային ուղին Արմեն Սարգսյանն անցել է ԳԱԱ գիտակրթական միջազգային կենտրոնում՝ լինելով համակարգչային լաբորատորիայի ղեկավար, ցանցային ադմինիստրատոր, ԳԱԱ գիտակրթական միջազգային կենտրոնի ուսումնական մասի պետի տեղակալ, Տեղեկատվական տեխնոլոգիաների բաժնի պետ: 2020թ. դեկտեմբերից Արմեն Սարգսյանը ԳԱԱ գիտակրթական միջազգային կենտրոնի տնօրենն է:

Արմեն Սարգսյանը ներկայացրեց ԳԱԱ գիտակրթական միջազգային կենտրոնի 2024-2028թթ. զարգացման ռազմավարական ծրագիրը: Կենտրոնի տեսլականն է դառնալ գիտական ստեղծարար միջավայր ապահովող եւ նորարություններով առաջնորդվող հետազոտական համալսարան՝ խթանելով հետազոտահեն կրթության, գիտության, արտադրության ներդաշնակ եւ արդյունավետ փոխգործակցությունը: Կենտրոնի նպատակներից է գիտության եւ կրթության շաղկապումը, հետազոտահեն կրթության իրականացումը: Նախատեսվում է հետազոտահեն կրթության կազմակերպման համար անհրաժեշտ միջավայրի եւ ենթակառուցվածքների շարունակական արդիականացում եւ կատարելագործում, մագիստրոսական ծրագրերի հետազոտական բաղադրիչի մասնաբաժնի ավելացում, մագիստրոսական թեզերի թեմաների շաղկապում կենտրոնում եւ ԳԱԱ համակարգի ինստիտուտներում իրականացվող գիտական թեմաներին, գիտական ծրագրերում ուսանողների, ասպիրանտների մասնակցության խթանում, աշխարհի առաջատար գիտակրթական կենտրոնների հետ համագործակցային կապերի ընդլայնում եւ համատեղ ծրագրերի իրականացում:

ՄԱՐԶԱԿԱՆ

ՉԻ ԿԱՐՈՂԱՑԵԼ ՈՒՂԵԳԻՐ ՆՎԱՃԵԼ

Նետաձգության տղամարդկանց Հայաստանի հավաքականը չի կարողացել հաջողության հասնել թուրքական Անթալիայում կայացած միջազգային օլիմպիական ընտրական վերջին մրցաշարում:

Թիմային պայքարում Հայաստանի եռյակը գրավել է 37-րդ տեղը:

Անհատական պայքարում Համլետ Պողոսյանը զբաղեցրել է 33-րդ, իսկ Վասիլ Շահնազարյանը եւ Անդրեյ Հովհաննիսյանը՝ 57-րդ տեղը:

Անհատական պայքարում Փարիզի Օլիմպիական խաղերի ուղեգիր են նվաճել 1-8-րդ տեղ գրաված մարզիկները, իսկ թիմայինում՝ լավագույն հնգյակը:

ՖՈՒՏԲՈԼԻ ԸՆՏՐԱՆԻՆ ՆԱՀԱՆՋԵԼ Է

Ֆուտբոլի միջազգային ֆեդերացիան՝ ՖԻՖԱ-ն, հրապարակել է դասակարգման նոր աղյուսակը:

Նոր վարկանիշային աղյուսակում Հայաստանի ֆուտբոլի ազգային թիմը մեկ հորիզոնականով նահանջել է: Ընտրանին այժմ 96-րդ հորիզոնականում է:

Առաջատար եռյակում փոփոխություն չկա: Միմյանց հաջորդում են Արգենտինան, Ֆրանսիան եւ Բելգիան:

Լավագույն տասնյակում են նաեւ Բրազիլիան, Անգլիան, Պորտուգալիան, Նիդեռլանդները, Իսպանիան, Խորվաթիան, Իտալիան:

ԱՎԱՐՏԵԼ Է ԿԱՐԻԵՐԱՆ

Հայտնի ամերիկացի բռնցքամարտիկ Ռայան Գարսիան հայտարարել է պրոֆեսիոնալ բռնցքամարտի կարիերան ավարտելու մասին:

«Ես պաշտոնապես ավարտում եմ կարիերաս. շուրջն այնքան կոռուպցիա կա, որ ես ստիպված էի վերջ տալ դրան: Ես կարող եմ զբաղվել դերասանությամբ կամ երգելով:

Ես կշարունակեմ մարզվել, բայց այս էջը փակված է: Ամենացավալին այն է, որ ես, հիանալի բռնցքամարտիկ լինելով հանդերձ, եկել եմ այս որոշմանը», - գրել է Ռայանը իր սոցիալական ցանցում:

Հիշեցնենք, որ ապրիլի 21-ին Ռայան Գարսիան միաձայն որոշմամբ հաղթել էր հայրենակից Դեւին Հեյնիին:

Սակայն ավելի ուշ հայտնի դարձավ, որ Գարսիայի դոպինգ թեստը պարունակում է արգելված նյութեր: Ավելի վաղ՝ հունիսի 8-ին, Գարսիան հարբած վիճակում ծեծկռտուք էր ունեցել Բեւերլի Հիլզի հյուրանոցներից մեկում: Հաղորդվում է, որ նա հաստատությանը 15 հազար դոլարի վնաս է պատճառել:

● *Հունիսի 26-ին՝ ժամը 19:00-ին, Երեւանի պետական կամերային թատրոնում տեղի կունենա «Ծննդյան վկայական» ներկայացումը: Տոմսերի արժեքը՝ 3000-8000 դրամ:*

ԵՂԵ՛Ք ? ՏԵՂԵԿԱՑՎԱԾ

ՍՈՑԻԱԼԱԿԱՆ

ՀԱՐՑ. Ուզում եմ իմանալ՝ որոնք են խնամքի տրամադրման տեսակները: Ո՞վ իրավունք ունի օգտվելու խնամքի ծառայություններից:

Ստելլա Մանուչարյան (46 տարեկան)

ՊԱՏԱՍԽԱՆ. Ս. Մանուչարյանի հարցին ի պատասխան՝ տեղեկացնում ենք, որ խնամքը տնային պայմաններում, բնակչության սոցիալական պաշտպանության շուրջօրյա խնամքի ընդհանուր կամ հատուկ տիպի (մասնագիտացված) հաստատություններում եւ սոցիալ-վերականգնողական ցերեկային կենտրոններում տրամադրվում է ծերության սոցիալական կենսաթոշակի տարիքի հասած կամ 18 տարին լրացած միայնակ (Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ նախատեսված խնամող չունեցող կամ ընտանիքում աշխատունակ անդամ չունեցող) հաշմանդամներին:

Հայաստանի Հանրապետության աշխատանքի եւ սոցիալական հարցերի նախարարություն

«ԺՈՂՈՎՈՒՐԴ». Նշենք, որ քաղաքացին (կամ նրա օրինական ներկայացուցիչը) պետք է դիմի փաստացի բնակության վայրի տարածքը սպասարկող սոցիալական աջակցության տարածքային գործակալություն կամ բաժին, որտեղ քաղաքացուն տրամադրվում է «Խնամքի տրամադրման համար դիմած անձի բժշկական քարտ» ձեւաթուղթը, որը լրացվում է քաղաքացուն սպասարկող տարածքային պոլիկլինիկայի կողմից: Տարածքային մարմնի ղեկավարը որոշում է կայացնում խնամք տրամադրելու մասին եւ այն ներկայացնում է Աշխատանքի եւ սոցիալական հարցերի նախարարություն: Նախարարությունը տարածքային մարմնից ստացած որոշումների հիման վրա համակարգում է տուն-ինտերնատներ հաճախորդների ընդունելության գործընթացը:

Էջը՝ ԱԼՎԱՐԴ ԿՈՇԿԱԿԱՐՅԱՆԻ

ԿԱՐԳ

ՀԱՐՑ. Եթե բանկը հաճախորդի հաշվեհամարին գումարը երկու անգամ է փոխանցում, ապա պարտավո՞ր է արդյոք հաճախորդը վերադարձնել այդ գումարը:

Անի Կիրակոսյան (34 տարեկան)

ՊԱՏԱՍԽԱՆ. Այո՛, հաճախորդը պարտավոր է այդ գումարը հետ վերադարձնել, քանի որ անձը, ով առանց օրենքի, այլ իրավական ակտերի կամ գործարքի սահմանված հիմքերի ուրիշ անձի (տուժողի) հաշվին ձեռք է բերել գույք կամ խնայել է այն (ձեռք բերողը), պարտավոր է տուժողին վերադարձնել անհիմն ձեռք բերած կամ խնայած գույքը (անհիմն հարստացումը)՝ բացառությամբ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1099 հոդվածով նախատեսված դեպքերի (ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1092 հոդվածի 1-ին կետ):

Այս կանոնը կիրառվում է՝ անկախ այն բանից՝ անհիմն հարստացումը ձեռք բերողի, տուժողի, երրորդ անձանց գործելակերպի հետեւանք է եղել, թե կատարվել է նրանց կամքից անկախ:

Ֆինանսական համակարգի հաշտարար

«ԺՈՂՈՎՈՒՐԴ». Բանկն իրավունք ունի նաեւ առանց հաճախորդի կարգադրության հաշվից գումար դուրս գրել դատարանի վճռով սահմանված դեպքերում:

ԼՈՒՐ ԿԱԴՐ

Լուսանկարը՝ համացանցից

Երեկ՝ 17:30-ից սկսած ուժեղ քամու հետեւանքով Երեւանի տարբեր վարչական շրջաններում, ինչպես նաեւ մարզերում վնասվել են տանիքների ծածկեր, թիթեղներ, սյուներ, ջերմոցային տնտեսության կառուցատարրեր, տապալվել են ծառեր:

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Մեր թերթը Բաժանորդագրվելու համար կարող եք դիմել

«Հայմամուլ» ՓԲԸ
հեռ. 45-82-00, 45-19-11

«Հայփոստ» ՊՓԲԸ
հեռ. 51-45-46, 51-45-47

«Բլից-Մեդիա» ՍՊԸ
հեռ 52-5301

Առաքումը՝ **ԱՆՎՃԱՐ**:

2011
Ժողովուրդ
1
www.armlur.am

Ձեզ հետաքրքրող ցանկացած հարցով կարող եք դիմել «Ժողովուրդ» օրաթերթի խմբագրություն (**010 54-64-23** հեռախոսահամարով), եւ մենք անպայման կանդրադառնանք ձեր բարձրացրած բոլոր խնդիրներին:

ԱՌԱՋԱՐԿ
հայկական տպագիր մամուլից

«Ժողովուրդ» օրաթերթին բաժանորդագրվելու համար կարող եք լրացնել հետեւյալ բլանկը եւ ուղարկել նշված հասցեով: Ամեն օր թերթը կհասնի ձեր նախընտրելի վայր:

Բաժանորդագրության բլանկ

Անուն՝ _____
Ազգանուն՝ _____
Առաքման հասցե՝ _____
Բջջային եւ/կամ քաղաքային հեռախոս՝ _____

Հեռ.՝(060) 490049
0023, Արշակունյաց 2, 5-րդ հարկ, 518ա.

ԵՂԱՆԱԿԻ ՏԵՍՈՒԹՅՈՒՆ

Շիրակ	+ 8 + 10 +22 + 26
Կոտայքի լեռներ	+ 8 + 12 +21 + 24
Կոտայքի նախալեռներ	+ 15+ 17 +28 + 30
Գեղարքունիք	+ 10+ 13 +21 + 24
Լոռի	+ 9 + 13 +24 + 27
Տավուշ	+ 15+ 17 +28 + 31
Արագածոտնի լեռներ	+ 9 + 13 +21 + 24
Արագածոտնի նախալեռներ	+ 15+ 18 +28 + 31

Արարատ	+ 16 + 18 +31 + 33
Արմավիր	+ 16+ 18 +31 + 33
Վայոց ձորի լեռներ	+ 8 + 11 +22 + 24
Վայոց ձորի նախալեռներ	+ 16 + 18 +31 + 33
Սյունիքի հովիտներ	+ 18 + 22 +29 + 32
Սյունիքի նախալեռներ	+ 13 + 15 +25 + 28
ԼՂՀ	+ 13 + 14 +25 + 26
Երեւան	+ 19 + 21 + 23 + 25

Լրատվական գործունեություն իրականացնող՝
«Ժողովուրդ թերթի խմբագրություն» ՍՊԸ
Հասցեն՝ ք. Երեւան, Աբովյան 22ա/3, հեռ՝ **010 54-64-23**
Պետական գրանցման վկայականի համարը՝ 03Ա089086
տրված է 24.11.2010
Ստորագրված է տպագրության **20.6.2024**
Հասցեն՝ Գեղարքունիքի մարզ, ք. Վարդենիս, Վ. Հակոբյանի 2/21

Գլխավոր խմբագիր՝
ՔՆԱՐ ՄԱՆՈՒԿՅԱՆ

Տպագրված է «ԳԻՆԴ» տպարան ՍՊԸ հրատարակչությունում
Խմբագրություն հանձնված նյութերը չեն գրախոսվում եւ չեն վերադարձվում, **Գ** նշանով նյութերը գովազդային հրապարակումներ են, որոնց համար խմբագրությունը պատասխանատվություն չի կրում:

«Ժողովուրդ» օրաթերթում հրապարակված նյութերը արտատպելիս կամ ընթացիկ մեջբերումներ անելիս պետք է պարտադիր գրառել հետեւյալ նախադասությունը. *«Շարունակությունը կարող եք կարդալ «Ժողովուրդ» օրաթերթի այսօրվա համարում»:*